ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 101-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 24-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու
2023 թվականի
Նոյեմբերի 24-ի N 101-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Մ. Կոստանյան

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Մ. Կոստանյան

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Մ. Կոստանյան

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՍՏԱՎԱՅՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈՓԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկ.՝ Դ. Մինասյան

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Զեկ.՝ Դ. Մինասյան

Աշխատակազմի քարտուղար՝ Գ.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 102-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 2023 թվականի 12 հուլիսի N /27.0.1/32839-2023 պետական փորձագիտական եզրակացությունը.

<u>Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝</u>

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ավագանու
2023 թվականի նոյեմբերի 24-ի N 102-Ն որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների (այսուհետ՝ առևտրի և ծառայությունների) ոլորտում իրականացվող գործունեությունը:
2. Համայնքի տարածքում առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացվող գործունեությունը կանոնակարգվում է «Առևտրի և ծառայությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, այլ իրավական ակտերով և սույն կանոններով:
3. Համայնքի տարածքում սույն կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարը:

2. ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Համայնքի տարածքում առևտուրն իրականացվում է առևտրի օբյեկտներում՝ խանութներում, կրպակներում, տաղավարներում, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում, ինչպես նաև առևտրի իրականացման վայրերում՝ առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների շուկաներում, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, կենդանիների շուկաներում, տոնավաճառներում (վերնիսաժներում) և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերում, բացօթյա առևտրի վայրերում, շրջիկ առևտրի կետերում:
5. Առևտրի օբյեկտներում սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը պետք է կատարվի ըստ ապրանքախմբերի առանձին բաժիններում:
6. Ելնելով տվյալ առևտրի օբյեկտի առանձնահատկություններից առևտրի օբյեկտը պետք է ապահովված լինի օրենքով թույլատրված ապրանքների վաճառքը կազմակերպելու համար օրենսդրությանը համապատասխան ընդունման, պահման և վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով և առևտրատեխնոլոգիական պարագաներով, պահեստային, վարչակենցաղային, ապրանքների վաճառքի նախապատրաստման համար անհրաժեշտ տարածքներով:
7. Առևտրի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:
8. Առևտրի օբյեկտներում սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքների նմուշների ցուցադրումն առևտրի օբյեկտից դուրս արգելվում է: Նշված ապրանքներ վաճառող առևտրի օբյեկտների ցուցափեղկերը և մուտքերը պարտադիր պետք է լինեն վարագուրապատված՝ այնպես, որ վաճառող ապրանքների նմուշները տեսանելի չլինեն:
9. Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերը պետք է ապահովված լինեն օրենսդրությանը համապատասխան կառուցված վճարովի կամ անվճար հասարակական զուգարաններով և դրանց առկայության մասին տեղեկացնող, ինչպես նաև գտնվելու տեղի վերաբերյալ նշում պարունակող մուտքի մոտակայքում տեղակայված ցուցանակով:
10. Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը պարտավոր է վաճառողներին (բացառությամբ առևտրի իրականացման վայրի տարածքում գործող առևտրի, հանրային սննդի օբյեկտների վաճառողների) ապահովել օրենսդրությանը համապատասխան առևտրատեխնոլոգիական սարքավորումներով, ինչպես նաև տվյալ առևտրական գործունեություն իրականացնելու համար նախատեսված այլ գույքով:

3. ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

11. Առևտրի օբյեկտներում պետք է բացառվի պիտանիելության ժամկետն անցած ապրանքների առկայությունը վաճառքում:
12. Առևտրի վայրի աշխատողը ապրանքը վաճառքի հանելուց առաջ պարտավոր է ստուգել ապրանքի որակն ըստ արտաքին հատկանիշների, դրանց պիտակների և գնապիտակների առկայությունը, իրազեկ լինել վաճառվող ապրանքների բնութագրական հատկություններին և անհրաժեշտության դեպքում սպառողին տալ ստույգ և հավաստի տեղեկություններ:
13. Վաճառողը պարտավոր է ապահովել սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների աշխատողներին աշխատանքային արտահագուստի կրումը:
14. Սպառողի (գնորդի) կողմից գնված պատշաճ և ոչ պատշաճ ապրանքների փոխարինումը կամ դրանց համար վճարված գումարի վերադարձումը և վերահաշվարկն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
15. Սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի և կենդանիների շուկաներում, տոնավաճառներում և ցուցահանդես-վաճառքի կազմակերպման վայրերում վաճառվող ապրանքների համար գնապիտակի առկայությունը պարտադիր չէ (բացառությամբ նշված վայրերում գործող առևտրի օբյեկտների):
16. Տոնավաճառները (վերնիսաժները) կազմակերպում են տեղական ինքնակառավարման մարմինները, օրենսդրությամբ սահմանված կարգով, միայն շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված տոնական օրերին:
17. Համայնքի տարածքում դեղերի վաճառքն իրականացվում է դեղատների միջոցով: Գնորդին վաճառված պատշաճ որակի դեղերը ենթակա չեն փոխարինման կամ վերադարձման:
18. Վաճառողի կողմից սննդամթերքի կշռափաթեթավորում կատարելիս, ելնելով տվյալ ապրանքատեսակի առանձնահատկությունից, փաթեթավորման համար օգտագործվում են հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության կողմից թույլատրված նյութերից պատրաստված փաթեթավորման միջոցներ: Փաթեթավորվող սննդամթերքի փաթեթի կամ մեջդիր պիտակների վրա նշվում են ապրանքի անվանումը, տեսակը, քաշը, մեկ կիլոգրամի արժեքը և կշռափաթեթավորված քաշի վաճառքի գինը, փաթեթավորման օրը, նաև պիտանիելության ժամկետը:
19. Ապրանքների վաճառքը սպառողների (գնորդների) պատվերներով կարող է իրականացվել առևտրի օբյեկտներից: Վաճառողը պարտավոր է սպառողներին (գնորդների) ապահովել մատուցվող ծառայությունների ցանկի, պատվերների ընդունման և ապրանքների հանձնման ժամկետի, վաճառվող ապրանքների տեսականու և գների վերաբերյալ մատչելի և ստույգ տեղեկատվությամբ:
20. Հացի և հացաբուլկեղենի մանրածախ առևտուրն իրականացվում է հացի և հացաբուլկեղենի մասնագիտացված խանութներում, առանձնացված տաղավարներում և կրպակներում, սննդամթերքի մասնագիտացված խանութների առանձնացված բաժիններում, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական ապրանքների շուկաների տարածքում գտնվող առանձնացված առևտրի օբյեկտներում, իսկ մանր կշռափաթեթավորված հատային ապրանքները՝ նաև շրջիկ առևտրի կետերի միջոցով:
21. Ոգելից խմիչքների և ծխախոտի առևտուրն իրականացվում է միայն համայնքի ղեկավարի թույլտվության դեպքում: Ուսումնական հաստատությունների, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպությունների առևտրի կետերում ոգելից խմիչքների վաճառք չի թույլատրվում:
22. Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերից դուրս հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքն արգելվում է: Դրանց վաճառքը թույլատրվում է իրականացնել օրենսդրությամբ սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխանող սարքավորումներով և գործարանային արտադրության ավտոցիստեռներով:
23. Գյուղատնտեսական արտադրանքի շուկայի կազմակերպիչը վաճառքի ընդունվող՝ փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով ապահովում է գյուղատնտեսական արտադրանքի շուկայում համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիա:
24. Արգելվում է առևտրի, հանրային սննդի օբյեկտներում, սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի, կենդանիների շուկաներում, կրպակներում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով արգելվող ապրանքներ վաճառելը (իրացնելը):

25. Արգելվում է 18 տարին չլրացած անձանց ծխախոտ, ալկոհոլային խմիչքներ, թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր, սարսափ կամ պոռնոգրաֆիա բովանդակող գրականություն և տեսաերիզներ վաճառելը:
26. Ցուցանակներում, ցուցափեղկերում, ինչպես նաև տեղեկատվության տրամադրման այլ միջոցներում և գովազդում արգելվում է օգտագործել այլ անձանց պատկանող և Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ապրանքային նշանը կամ ֆիրմային անվանումը, եթե այդպիսի օգտագործման համար առկա չէ դրանց սեփականատիրոջ կողմից օրենքով սահմանված կարգով տրված թույտվությունը:
27. Համայնքի տարածքում բացօթյա առևտուր կարող են իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան թույլտվություն ստացած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:
28. Թույլատրվում է միայն ծաղիկների, տնկիների, ամանորյա տոնակատարությունների համար նախատեսված եղևնիների և սոճիների, պաղպաղակի, ջրի, հանքային ջրի, հյութերի, զովացուցիչ ըմպելիքների բացօթյա առևտուրը: Վաճառարկղերը պետք է դրվեն տակդիրների վրա, արգելվում է վաճառարկղերը դնել անմիջապես գետնին, մայթին, սալահատակին:

4. ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

29. Հանրային սնունդը՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և սպառման կազմակերպումն է հատուկ կահավորված տարածքում:
30. Համայնքի տարածքում գործող հանրային սննդի օբյեկտների տեսակներն են՝ ճաշարանները, ռեստորանները, սրճարանները, բարերը, բուֆետները և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտները:
31. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:
32. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի <Առևտրի և ծառայությունների մասին> օրենքով սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:
33. Հանրային սննդի օբյեկտի աշխատողներից՝ բարմենը, խոհարարը, հրուշակագործն ու մատուցողը պետք է ունենան անձնական սանիտարական գրքույկ, կրեն աշխատանքային հագուստ, պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթություն, կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ:
34. Սպառողներին սպասարկման ձևերն ու մեթոդները սահմանում է վաճառողը:
35. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին: Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որն ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:
36. Մատուցողի ներկայացված հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում է նրա անուն ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի, հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա ապրանքների վերջնական գինը:
37. Համայնքի տարածքում հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և ծխախոտի իրացման թույլտվությունը տալիս է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարը:

5. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

38. Կենցաղային ծառայությունը սպառողների կենցաղային կարիքների բավարարման համար՝ նրանց պատվերով կատարողի կողմից մատուցվող ծառայություն է:
39. Կենցաղային ծառայության օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:
40. Կենցաղային ծառայության օբյեկտում՝ սպառողներին տեսանելի տեղում, փակցվում է մատուցվող ծառայությունների գնացուցակը:
41. Կենցաղային ծառայության օբյեկտներում ծառայությունների պատվերների ընդունման տեղը, ձևը որոշում է կատարողը:
42. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում, առանձին կենցաղային ծառայությունների մասով, կենցաղային ծառայություններ մատուցող աշխատողը պարտավոր է ունենալ համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական կամ առնվազն երկու տարվա համապատասխան աշխատանքային ստաժ:

6. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

43. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողությունն իրականացվում է «Առևտրի և ծառայությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով վերապահված իրավասությունների շրջանակներում:
44. Համայնքի ղեկավարը հսկողությունն իրականացնում է համապատասխան աշխատակիցների (այսուհետ՝ տեսուչներ) միջոցով:
45. Հսկողության իրականացումն սկսելու համար հիմք է հանդիսանում համայնքի ղեկավարի կարգադրությունը:
46. Համայնքի ղեկավարի կարգադրության համար հիմք են հանդիսանում օրենքով վերապահված լիազորությունների իրականացումը և քաղաքացիներից (սպառողներից) ստացված առաջարկություններն ու առարկությունները:
47. Հսկողություն իրականացնելու մասին համայնքի ղեկավարի հանձնարարագրում նշվում են հսկողություն իրականացնող մարմնի անվանումը, տեսուչների անունը, ազգանունը, հսկողություն իրականացնելու ենթակա տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը: Հանձնարարագրով չամրագրված տեսուչները իրավունք չունեն մասնակցելու հսկողության իրականացմանը:
48. Տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ հսկողության ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան մեկ աշխատանքային օր, ընդ որում, հսկողության փաստացի սկսելու օր է համարվում հսկողություն իրականացվող օբյեկտում պահվող հսկողության մատյանում գրառում կատարելու օրը:
49. Տեսուչներն ունեն «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավունքներ և պարտավորություններ:
50. Տնտեսավարող սուբյեկտի կողմից «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների խախտման դեպքում տեսուչները հատուկ համարակալված պաշտոնաթերթերի վրա կազմում են արձանագրություն (հավելված թիվ 2) երկու օրինակից, իսկ խախտումներ և թերություններ չհայտնաբերելու դեպքում՝ տեղեկանք:
51. Կազմված արձանագրությունը կամ տեղեկանքը հսկողություն իրականացնող տեսուչները երկու օրվա ընթացքում ներկայացնում են տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Կազմված արձանագրությունը ստորագրում են տեսուչները, տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը: Տարաձայնությունների դեպքում ստորագրողների կարծիքները նշվում են արձանագրությունում:
52. Արձանագրությունը ստորագրելուց ստորագրողների հրաժարվելու դեպքում այդ մասին արձանագրությունում կատարվում է համապատասխան գրառում: Տնտեսավարող սուբյեկտի կողմից արձանագրությունը ստորագրելու և տարաձայնություններ ներկայացնելու ժամկետը չի կարող գերազանցել երկու աշխատանքային օրը: Արձանագրության պատճենի մեկ օրինակը հանձնվում է տնտեսավարող սուբյեկտին:
53. Հսկողության իրականացման արդյունքներով արձանագրված իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը կատարվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:
54. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարը համայնքի տարածքում առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացվող հսկողության մասով հաշվետու է Արմավիրի մարզպետին: Հսկողության արդյունքների մասին ներկայացվում է կիսամյակային հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 103-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 2023 թվականի 12 հուլիսի N /27.0.1/32839-2023 պետական փորձագիտական եզրակացությունը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ավագանու
2023 թվականի նոյմեբերի 24-ի թիվ 103-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով /այսուհետ՝ Կարգ/ կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի պայմանների և իրականացման կարգի հետ կապված հարաբերությունները:

1) Սույն կարգով կարգավորվում են Փարաքար համայնքի տարածքում բարեկարգման տարրերի նախատեսման, դրանց հիմնական հարաչափերի և սահմանափակումների վերաբերյալ պահանջները՝ քաղաքաշինական գործունեության ընթացքում քաղաքաշինական գործունեության սուբյեկտների կողմից կիրառման համար անվտանգ, մատչելի, հարմարավետ, արդիական, գրավիչ՝ բնակավայրերի (համայնքների) ծրագրային փաստաթղթերով ամրագրված պահանջների համաձայն քաղաքաշինական միջավայր ստեղծելու համար:

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Փարաքար համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Բնակելի նշանակության տարածքներում համալիր բարեկարգման նորմավորման օբյեկտներն են հասարակական տարածքները, բնակելի կառուցապատման, նախադպրոցական հաստատությունների, դպրոցների, ավտոկանգառատեղերի տեղամասերը, որոնք տարբեր համադրություններով ձևավորում են բնակելի խմբեր, միկրոշրջաններ, բնակելի շրջաններ:
Բնակելի նշանակության տարածքներում համալիր բարեկարգում նախագծելիս պետք է ապահովել բոլոր բնակիչների համար մատչելի հասարակական տարածքների միասնական համակարգի ձևավորում՝ պահպանելով ծավալակոմպոզիցիոն լուծումների կամերային (նուրբ, հարմարավետ, հանգիստ) մասշտաբը:
Բարեկարգման ենթակա տարածքի ծածկույթները ապահովում են բնակավայրում անվտանգ և հարմարավետ տեղաշարժման պայմաններ, ինչպես նաև ձևավորում են քաղաքաշինական միջավայրի ճարտարապետա-գեղարվեստական տեսքը:
Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերն ու տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է Փարաքար համայնքի վարչական տարածքում գտնվող՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, հանգստի գոտիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,
4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,
5) բացօդյա շուկաների և տոնավաճառների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը,
2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը,
3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը և փոխարինումը:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար ՀՀ Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով և միայն համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում,
2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում,
3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գույնի փոփոխություններ,
4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ,
5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

9. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Փարաքարի համայնքապետարանի կողմից համաձայնեցված ճարտարապետական կամ ձևավորման նախագծին համապատասխան՝ համայնքի ղեկավարի համաձայնությունը ստանալուց հետո:

10. Փարաքարի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ անշարժ գույքի բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականավման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

11. Տարածքի ինժեներական նախապատրաստման և պաշտպանության տարրերը պետք է համապատասխանեն տարածքի գոտևորման նախագծի պահանջներին՝ հաշվի առնելով համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները, ապահովեն տարածքի անվտանգությունն ու օգտագործման հարմարավետությունը, բնական և տեխնածին անբարենպաստ գործընթացներից նրա պաշտպանությունը՝ կապված նոր շինարարության կամ վերակառուցման հետ:

Շենքերի և շինությունների ձևավորման և սարքավորման նախագծումը ներառում է տանիքի գունային լուծում և հարդարում, ալեհավաքների տեղադրում, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր, սալվածք, տնային նշաններ, պաշտպանիչ ցանցեր և այլն:

12. Համալիր բարեկարգման նախագծման դեպքում ռելիեֆի կազմակերպման խնդիրները պետք է ձևավորվեն հաշվի առնելով տարածքի գործառական նշանակությունը, բնակավայրի կազմավորված քաղաքաշինական միջավայրի վերակառուցման, արդիականացման, կառուցապատման առկա ռեզերվների օգտագործման հնարավորությունները: Վերակառուցվող տարածքների ռելիեֆի կազմակերպումը պետք է ուղղված լինի ռելիեֆի, հողի ծածկույթի, առկա կանաչ տարածքների, գոյություն ունեցող դրենաժային համակարգերի պահպանմանը, բարելավմանը, ինչպես նաև շինարարական հրապարակներից դուրս մղվող գրունտների նպատակային օգտագործմանը:

13. Ռելիեֆի դարավանդավոր լինելու դեպքում պետք է թույլ չտալ.

1) հողի և շինությունների ընդհանուր կայունության կորուստ,

2) հողի տեղաշարժերի պատճառով հարակից շինությունների, հաղորդակցուղիների՝ տրանսպորտային և կապի (ինժեներական) ենթակառուցվածքների վնասվածք կամ կորուստ:

14. Գրունտի կայունության կորուստը և ավելորդ տեղաշարժերը կանխելու համար պետք է նախագծել հենապատեր: Լանջերը պետք է ամրացվեն: Լանջերի ամրացման նյութերի և մեթոդների ընտրության դեպքում պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները.

1) բնակավայրում լանջերի տեղադիրքը,
2) լանջի վրա մեխանիկական բեռնվածության ենթադրյալ մակարդակը,
3) լանջի զառիթափությունը,
4) ձևավորվող միջավայրը:

15. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) Բնակավայրերի կառուցապատման մեջ բաց հուների լանջերի ամրացումը պետք է իրականացվի այնպիսի նյութերի և միջոցների օգտագործմամբ, որոնք կկանխեն մակերևութային հոսքի տարերայնորեն, անկազմակերպ հայտնվելը ջրամբարում և ափերի փլուզումը մեխանիկական ծանրաբեռնվածության բարձր մակարդակի պայմաններում:
2) Բնակավայրերի տարածքներում պետք է կիրառվի ջրահեռացման փակ համակարգ: Ջրահեռացման բաց համակարգերի կիրառումը թույլատրվում է այգիների, այգեպուրակների և զբոսայգիների տարածքներում:
3) խանութների, հասարակական սննդի, կենցաղսպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը և գովազդային վահանակները պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով, չխաթարեն միջավայրը և չխանգարեն հետիոտն և ավտոմոբիլային երթևեկությանը,
4) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ քանակով աղբամանների առկայությունը,
բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը,
գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և /կամ/ սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից,
դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում կամ ճամփեզրին,
ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:

16. Բնակավայրերի տարածքների կանաչապատման ընթացքում պետք է հաշվի առնել կանաչ տարածքների հիմնական գործառական նշանակությունը.

1) սանիտարահիգիենիկ և բնապահպանական,
2) բնակավայրերի ճարտարապետա-գեղարվեստական նկարագիրը,
3) հակաաղմկային ազդեցության ապահովումը:

Կանաչապատման նախագծի շրջանակներում անհրաժեշտ է սահմանել ծառերի և թփերի տնկարկների նվազագույն հեռավորություններ մինչև ինժեներական ցանցեր, շենքեր և շինություններ, որոնք թույլ են տալիս ապահովել շենքերի և շինությունների բնականոն շահագործումը և սպասարկումը համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N263-Ն հրամանով հաստատված (ՀՀՇՆ 30-01-) շինարարական նորմերի պահանջների:

Բնակավայրերի կանաչ գոտիների չափերը՝ ըստ բնակավայրի տարածքի, կանաչ գոտիների տեսակները և կանաչապատման տարրերի կազմը (տեսականին)՝ ըստ գոտիականության, ինչպես նաև կանաչ գոտիների անտառների պահպանությանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պայմանները որոշվում են ՀՀ կառավարության 2018թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշմամբ հաստատված պահանջներին, տարածական պլանավորման փաստաթղթերին և նախագծային լուծումներին համապատասխան:

Ջերմամատակարարման գծերի ազդեցության գոտիներում ծառատունկի դեպքում պետք է հաշվի առնել ջերմագծերի առանցքից երկու կողմերում հողի տաքացման գործոնը:

16. Համայնքի տարածքի բարեկարգման նախագծում կիրառվող ծածկույթի տեսակը պետք է համապատասխանի քաղաքաշինության բնագավառում գործող նորմատիվային պահանջներին՝ այդ թվում լինի հիմնանորոգման/վերակառուցման և/կամ նորոգման համար պիտանի, էկոլոգիապես մաքուր, սահքը բացառող: Ծածկույթի տեսակների ընտրությունը պետք է ընդունել դրանց նպատակային նշանակությանը, ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ հիմք ընդունելով տվյալ բնակավայրի տարածական պլանավորման փաստաթղթի պահանջները.

17. Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և /կամ/ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

18. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն,այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը, համաձայնեցնում է համայնքի ղեկավարի հետ:

19. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը, Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

20. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա նրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

21. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների, առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
3) առանձնատների համար՝ հողամասի պարագծից մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների, գազալցակայանների, արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից 5-15 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
5) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
6) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 5-10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,
7) առանձին դեպքերում կարող են կիրառվել սույն կետի 1-6-րդ ենթակետերում նշված ծավալներից տարբերվող ծավալներ՝ համայնքապետարանի համաձայնությամբ:

22. Բնակելի, հասարակական և արտադրական օբյեկտների տարածքների նախապատրաստումը կառուցապատման/շինարարության կատարվում է հետևյալ տեխնոլոգիական հաջորդականությամբ՝ նախագծային լուծումներին համապատասխան.

1) շինարարական աշխատանքները կազմակերպվում են ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն հրամանով (ՀՀՇՆ I-3.01.01-2008) հաստատված պահանջների համաձայն, այդ թվում՝ շինություններով և հաղորդակցուղիներով զբաղեցված տարածքներում ինժեներական հաղորդակցուղիների անցկացմամբ, տվյալ բնակավայրում կամ թաղամասում օբյեկտների և շինությունների բավարար կենսապահովումը չխաթարելու պայմանով (էլեկտրամատակարարումը, գազամատակարարումը, ջրամատակարարումը, կապի համակարգերը, ջերմամատակարարումը և կոյուղին, ճանապարհների, մայթերի, հարթակների անվտանգ շահագործումը և այլն),
2) շինություններից և կանաչապատ հատվածներից ազատ տարածքներում՝ ժամանակավոր մակերեսային ջրահեռացման խողովակաշարի կամ փոսորակի ուղղությամբ, ինչպես նաև հողային աշխատանքների կատարման հատվածներում իրականացվում է բուսական գրունտի հանում, տեղափոխում կամ թմբապատում (обвалование), տարածքում ժամանակավոր մակերեսային ջրահեռացման ապահովում փոքր արհեստական կառուցվածքների իրականացմամբ՝ շինարարության արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ տրանսպորտային հաղորդակցուղիների հատման մասերում,
3) կանաչապատ տարածքներում իրականացվում է պահպանման ենթակա տնկիների, ծառերի, թփերի, բույսերի և բուսական գրունտի առանձնացում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ծառերի և թփերի տեղափոխում այլ տարածքներ՝ դրանցում կանաչապատում ապահովելու նպատակով,

4) շինարարության համար նախատեսված տարածքում իրականացվում է բուսական ծածկույթի (ծառերի, թփերի, բույսերի և այլն) բների հանում, մաքրում, տարածքում առկա և պահպանման ոչ ենթակա բուսական շերտի առանձնացում արմատներից, տարածքի մաքրում ծառերի բներից և թփերից,

5) ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա կանաչ տնկիները անհրաժեշտ է ցանկապատել, շինարարական հրապարակի տարածքում առանձին կանգնած ծառերի բները պաշտպանել վնասվածքներից՝ փաթեթավորելով ատաղձափայտով: Առանձին կանգնած թփերն անհրաժեշտ է վերատնկել: Կանաչապատման համար պիտանի ծառերն ու թփերը պետք է վերատնկվեն դրանց համար նախատեսված հատուկ պահպանական գոտում,

6) կառուցապատման/շինարարական (շինմոնտաժային) աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է իրականացնել ուղանցումների, մայթերի, փողոցների և հարթակների կառուցում արդիական ծածկույթներով, բուսական գրունտի փռում, կանաչ տնկիների տնկարկում, սիզամարգերի և ծաղկանոցների իրականացում (սերմերի ցանում, տնկում), տնկիների խնամքի ապահովում՝ նախագծային լուծումների և պայմանագրային պարտավորությունների համաձայն ,

7) տարածքի միկրոկլիմայի բավարար պահանջների ապահովման համար բարեկարգման տարրերի և միջոցառումների ընտրությունը անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով աշխարհագրական դիրքը, տվյալ քաղաքաշինական միջավայրի կառուցապատման և հատակագծման առանձնահատկությունները, կլիմայական պայմանները, բարեկարգվող տարածքի գործառական նշանակությունը, կլիմայի փոփոխության անբարենպաստ հետևանքների ազդեցությունը:
Քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների տարածքների բարեկարգման միջոցառումները կատարվում են սույն նորմերով սահմանված պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 104-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 2023 թվականի 12 հուլիսի N /27.0.1/32839-2023 պետական փորձագիտական եզրակացությունը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ավագանու
2023 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 104-Ն որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգի հետ կապված հարաբերությունները (այսուհետ՝ կարգ):

2. Արտաքին գովազդն (այսուհետ՝ գովազդ) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումն է բնակավայրերում՝ տարբեր տեխնիկական միջոցների օգնությամբ (վահանակների, գրաժապավենների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների և այլնի) անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքի կամ նախաձեռնությունների նկատմամբ:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակների վրա զետեղվող տեղեկատվությունը գովազդ չի համարվում:

4. Սույն կարգը տարածվում է բոլոր այն տարածքների վրա, որտեղ պետք է տեղադրվի գովազդը:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի սեփականություն համարվող հողամասի վրա գովազդի միջոց տեղադրելու համար Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված կարգով, սույն կարգին և պայմաններին համապատասխան, Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ղեկավարին դիմում ներկայացրած գովազդատուին (գովազդակրին) օգտագործման իրավունքով տրամադրվում է հողամաս՝ կնքելով հողօգտագործման համապատասխան պայմանագիր, հետագայում տվյալ կողմի հետ նախապատվության իրավունքով երկարաձգելու պայմանով:

6. Այն դեպքում, երբ գովազդի միջոցը տեղադրվում է համայնքային սեփականություն չհանդիսացող տարածքում (կամ դրանց օգտագործմամբ), ապա գովազդի միջոցի տեղադրելու թույլտվության մասին որոշումը ընդունում է համայնքի ղեկավարը՝ տվյալ տարածքի սեփականատիրոջ կամ տարածքի օգտագործողի համաձայնության առկայության դեպքում: Ընդ որում, գովազդատուի և տարածքի սեփականատիրոջ միջև հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրով:

7. Գովազդի միջոց տեղադրելու թույլտվության մասին որոշման նախագծին կցվում է գովազդատուի ու տարածքի սեփականատիրոջ միջև կնքված պայմանագրի պատճենը:

8. Գովազդի տեղադրումը թույլատրվում է, եթե այն համապատասխանում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, իսկ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի դեպքում՝ ՀՀ Առողջապահության նախարարության թույլտվության առկայության դեպքու՝ ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 1422-Ն որոշման պահանջներին համապատասխան:

2. ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9. Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի տարածքում գովազդ տեղադրելու թույլտվությունը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կարգի համաձայն տրվում է Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ղեկավարի որոշմամբ:

10. Համայնքի ղեկավարի որոշմանը կցվում են թույլտվությունը և գովազդի էսքիզը՝ համաձայն Ձև 1-ի և Ձև 2-ի:

11. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն հայտ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ղեկավարին՝ նշելով իր անունը, ազգանունը, հաշվառման վայրը, գովազդի տեղադրման վայրը և ժամկետը:

12. Հայտին կցվում է համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները, իսկ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համաձայնությունը:

13. Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ղեկավարը գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուից հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզում է գովազդային միջոցի համապատասխանությունը կարգի և պայմանների պահանջներին (եթե այն թերի է, ետ է վերադարձվում՝ թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամկետում ներկայացնելու համար), և 15 օրվա ընթացքում համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդտեղադրելու թույլտվություն, որում նշվում են՝ գովազդատուի անվանումը, գովազդի չափերը, տեղադրման ձևը, գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը և կցվում է գովազդի էսքիզը:

14. Թույլտվության որոշման նախագծերը նախապատրաստում է Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության ոլորտը կարգավորող բաժինը կամ համապատասխան համայնքային պաշտոնատար անձը:

15. Սույն կարգի 5-րդ կետի համապատասխան՝ հատկացված տարածքի նույն հասցեում գովազդ տեղադրելու համար մեկից ավելի գովազդատուների հայտերի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ղեկավարը «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հայտարարում և անց է կացնում մրցույթ, որի արդյունքներով մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն:

16. Գովազդի միջոց տեղադրելու վերաբերյալ գովազդատուի հայտը 15 օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում եթե՝

1) 2-րդ անգամ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգի և պայմանների պահանջներին.

2) խախտվում են «Գովազդի մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

3) գովազդի միջոցի տեղադրմամբ խոչընդոտվում է ճանապարհային երթևեկությունը կամ քաղաքացիների անցուդարձը, խախտվում են այլ անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը:

17. Գովազդային միջոց տեղադրելու հայտը մերժելու դեպքում՝ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:

18. Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում, գովազդատուն (գովազդակիրը) մինչև գովազդային նյութերի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության

փոփոխումը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ղեկավարին՝ կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էսքիզը, որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը: Գովազդի էսքիզը համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ղեկավարի հետ:

19. Գովազդը պետք է համապատասխանի «Գովազդի մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, սույն կարգի, պայմանների և այլ իրավական ակտերի պահանջներին:

20. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայտատուի պատվերով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծով:

21. Գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:

22. Գովազդատուն (գովազդակիրը) իրավասու չէ գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը փոխանցել կամ օտարել այլ անձի:

23. Գովազդտեղադրելու թույլտվության ժամկետը լրանալու, պայմանագրով նախատեսված հիմքերով այն վաղաժամկետ դադարելու, լուծելու դեպքում գովազդատուն (գովազդակիրը) պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը և դրա տեղաբաշխման միջոցները, իսկ զբաղեցրած տարածքը բերել նախկին վիճակին:

24. Սույն կարգով նախատեսված պարտավորությունները գովազդատուի (գովազդակրի) կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի համայնքի ղեկավարի որոշման համաձայն՝ գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրականացվում է համայնքի կողմից՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից (գովազդակրից) ստանալով համապատասխան փոխհատուցում:

3. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

25. Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ավագանին համայնքի տարածքում գովազդ տեղադրելու թույլտվության մեկ քառակուսի մետրի տեղական տուրքի դրույքաչափերը սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

26. Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի այլ դրույքաչափ, գովազդատուն (գովազդակիրը) վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:

27. Սույն կարգով նախատեսված հողօգտագործման վճարի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ավագանու կողմից:

28. Սույն կարգով համապատասխան վճարված գումարներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի բյուջե:

29. Գովազդային օրենսդրության պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Հավելված N2
ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու
2023 թվականի նոյեմբերի 24 -ի
N 104-Ն որոշման

ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները (այսուհետ՝ պայմաններ) մշակվել են «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգին» (այսուհետ՝ կարգ) համապատասխան:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի (այսուհետ՝ գովազդ) միջոցների տեղադրումը թույլատրվում է սույն կարգի և պայմանների պահանջներին համապատասխան:

2. ԳՈՎԱԶԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

3. Գովազդի միջոց են համարվում Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի տարածքում տեղադրվող գովազդային տեղեկատու կրողները՝ անկախ շենքերի, շինությունների և հողամասերի սեփականության ձևից: Դրանց թվում են վահանակային կայանքները (վահանակները), տանիքային կայանքները, մեծանկարները (պաննո), էկրանները, բարձակները, ցուցատախտակները, շենքերի մուտքերի և պատուհանների հովիարները (մարկիզ), գրաժապավենները (տրանսպարանտ) և այլն:

3. ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Գովազդ տեղադրելուն ներկայացվող պահանջները՝

1) գովազդի միջոցները չպետք է՝

ա. խոչընդոտեն ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը, փողոցների ու մայթերի անցմանը, խանգարեն փողոցների ու մայթերի մեքենայացված մաքրմանը.

բ. սահմանափակեն տեսանելիությանը ավտոճանապարհների վրա.

գ. առաջացնեն երթևեկության մասնակիցների կուրացում լույսով, այդ թվում նաև անդրադարձող.

դ. արգելք հանդիսանան հետիոտնի շարժմանը.

ե. լինեն ճանապարհների վտանգավոր հատվածներում և տեղադրվեն լուսամփոփների ու ճանապարհային կանգնակների վրա.

2) ցանկացած տիպի գովազդի միջոցների տեղադրումը պետք է հիմնավորել համապատասխան նախագծային և տեսողական ընկալման դիտակետից.

3) գովազդ տեղադրել չի թույլատրվում՝

ա. բնակելի շենքերի մոտ, եթե դրանք հանդիսանում են աղմուկի, տատանման, հզոր ճառագայթման և էլեկտրամագնիսական դաշտի աղբյուր.

բ. թանգարաններում, պատմական և ճարտարապետական հուշարձանների վրա, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի վրա և դրանց տարածքում.

գ. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վրա և դրանց տարածքներում (պետական հաշվառման վերցրած պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակույթային այլ արժեք ունեցող կառույցների, դրանց համակառույցների և համալիրների, իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքների վրա, ինչպես նաև պատմամշակութային արգելանոցներում):

դ. ճանապարհային ցանցում, երբ այն անհամապատասխան է ճանապարհատրանսպորտային տվյալ իրավիճակի հետ և նմանություն ունի (արտաքին տեսքով, պատկերով և ձայնային էֆեկտով) ճանապարհային նշանների, ճանապարհային երթևեկության կազմակերպման և այլ տեխնիկական միջոցների հետ.

4) Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի հրապարակներում, ինչպես նաև դրանց համար մուտքեր և ելքեր հանդիսացող տարածքների առանձին տեղերում կարող է տեղադրվել գովազդ, եթե այն չի խոչընդոտում ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը և հրապարակների կառուցապատման տեսողական ընկալմանը:

4.ԳՈՎԱԶԴԻ ԱՌԱՆՁԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

5. Վահանակային կայանքները (վահանակները) տեղեկատվության համար մակերես նախատեսող կոնստրուկցիաներ են և բաղկացած են հիմքից, հիմնակմախքից (կարկաս) և տեղեկատու դաշտից:

1) Տեղեկատու դաշտի չափի տեսակներն են՝
ա. մեծ չափերի - 3մx4մ, 3մx6մ և այլ չափերի
բ. միջին չափերի - 1.8մx1.2մ, 2մx3մ
գ. փոքր չափերի - 0.6մx0.9մ և ավելի փոքր չափերի.

2) վահանակներին ներկայացվող պահանջներն են՝
ա. երկկողմանի կատարում
բ. միակողմանի կատարում, որի դեպքում գովազդի հակառակ կողմը պարտադիր դեկորատիվ ձևավորում է.

3) Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի կենտրոնական հատվածի սահմաններում թույլ է տրվում 0.6մx0.9մ, 1.8մx1.2մ, ինչպես նաև 3մx4մ մակերեսով տեղեկատու դաշտով վահանակների տեղադրումը.

4) Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի կենտրոնական հատվածում տեղադրվող տեղեկատու դաշտով գովազդային վահանակի կրող հիմնասյան դիրքը պետք է լինի միայն ուղղահայաց.

5) Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքում 3մx6մ և այլ չափերի տեղեկատու դաշտով գովազդային վահանակների տեղադրումը թույլատրվում է համապատասխան նախագծային հիմնավորման առկայության դեպքում.

6) Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի կենտրոնական հատվածից դուրս կարող են լինել 1.8մx 1.2մ, 3մx4մ, 3մx6մ տեղեկատու դաշտով և այլ չափերի վահանակներ.

7) մայրուղիներում և պողոտաներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝
ա. 15քմ – 18քմ և այլ չափերի 150մ-200մ
բ. 10քմ – 15 քմ՝ 100մ – 150մ
գ. 6քմ – 10քմ՝ 50մ – 75մ
դ. 4քմ – 6քմ՝ 30մ – 50մ
ե. 2քմ – 4քմ՝ 15մ – 25մ
զ. մինչև 2քմ՝ 10մ – 15մ.

8) Նեղ փողոցներում և նրբանցքներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև եղած հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝
ա. 10քմ – 12քմ՝ 50մ – 75մ
բ. 6քմ – 10քմ՝ 30մ – 50մ
գ. 4քմ – 6քմ՝ 20մ – 30մ
դ. 2քմ – 4քմ՝ 10մ – 20մ
ե. մինչև 2քմ՝ 10մ.

9) մասնագիտական փորձաքննություն անցած և համաձայնեցված նախագծերի առկայության դեպքում կարող են օգտագործվել կոնստրուկցիաներ, որոնց տեղադրումը համապատասխանում է մայրուղիների, փողոցների և քաղաքային գոտիների արտաքին ձևավորմանը ներկայացվող պահանջներին:

6. Շենքերի, շինությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի բարեկարգման տարրերի վրա տեղադրվող գովազդի և տեղեկատվության մնայուն միջոցների տեսակներն են.

1) տանիքային կայանքները ծավալային կամ մակերեսային կոնստրուկցիաներ են, որոնք տեղադրվում են ամբողջովին կամ մասամբ՝ շենքի ճակատային մասում կամ տանիքին:

ա. Տանիքային կայանքները բաղկացած են կոնստրուկցիայի կրող մասի ամրակցման տարրերից և տեղեկատու կայանքից:

բ. Տանիքային կայանքները պետք է ունենան հակահրդեհային և հոսանքի վթարային անջատման համակարգ:

գ. Ամրակցման տարրերը, ինչպես նաև կոնստրուկցիայի կրող մասի հակառակ կողմը պետք է ծածկվեն դեկորատիվ պանելով:

դ. Տանիքային կայանքի տեղադրման հայտերն ընդունվում են պատվիրատուի կողմից մասնագիտական փորձաքննություն անցած կոնստրուկցիաների և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծի առկայության դեպքում:

2) Պատի մեծանկարներ (պաննո) են կոչվում գովազդի այն միջոցները, որոնք տեղադրվում են շինությունների պատերին հետևյալ ձևերով՝

ա. պատկեր (տեղեկատվական դաշտ), որն անմիջապես շերտաձածկում է պատը, պատկերի կոնստրուկցիան հավաքվում է ամրակցման տարրերից, հիմնակմախքից և տեղեկատու դաշտից.

բ. պատի մեծանկարները կատարվում են անհատական նախագծի հիման վրա.

գ. պատի մեծանկարները պարտադիր պետք է ունենան համապատասխան փորձաքննություն անցած կոնստրուկցիաների նախագիծ.

դ. պատի մեծանկարների տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է կոնստրուկցիայի կամ անմիջական չափերով:

3) Բարձակ (կոնսոլային կոնստրուկցիա) են կոչվում երկկողմանի հարթակային վահանակները, որոնք ամրակցվում են կայմասյուններին կամ շենքերի վրա: Համապատասխան հիմնավորման դեպքում թույլատրվում է բարձակները տեղադրել համայնքային լուսավորման և կոնտակտային ցանցերի կրող կոնստրուկցիաների վրա:

ա. Բարձակները պետք է լինեն երկկողմանի տեսքով և ունենան ներքին լուսավորում:

բ. Հիմքերի վրա (ուղղահայաց) տեղադրվող բարձակների տիպային չափերն են՝ 1.8մx1.2մ (մայրուղիների, պողոտաների, հրապարակների համար), 0.6մx0.9մ, 1.0մx0.7մ (նեղ փողոցների և նրբանցքների համար) և ավելի փոքր:

Շահագործման անվտանգության նպատակով բարձակները տեղադրվում են հողի մակերևույթից ոչ պակաս, քան 3 մետր բարձրության վրա:

գ. Հիմքերի վրա տեղադրված բարձակները տեղադրվում են երթևեկելի մասից դուրս՝ մայթի կողմը: Արգելվում է մեկից ավել բարձակների տեղադրումը մեկ հիմքի վրա:

դ. Բարձակի տեղեկատու դաշտի մակերեսը հաշվարկվում է երկու կողմերիընդհանուր մակերեսով:

7. Կրկնաձիգ գրաժապավենը (տրանսպարանտ) գովազդի տեղեկատվության միջոց է: Այն բաղկացած է հիմքից, ամրացման սարքավորումից և տեղեկատու պատկերից:

1) Գրաժապավենների հեռավորությունն իրարից պետք է լինի 50մ-ից ոչ պակաս:

2) Գրաժապավենների բարձրությունը պետք է լինի երթևեկության գծի համեմատ 5մ-ից ոչ պակաս:

3) Տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է երկու կողմերի մակերեսով:

8. Էկրանավորող սարքավորումները գովազդի և տեղեկատվության միջոց են:

1) Դրանց կոնստրուկցիան ներառում է էկրանավորող (վերարտադրող) սարքավորման մակերես (էկրան) կամ տեղեկատու պատկեր:

2) Հարթ պատկերների համար նախատեսված տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է էկրանավորող պատկերի մակերեսով:

9. Գովազդի վահանակների միջև եղած հեռավորությունն ըստ տրանսպորտային միջոցների թույլատրվող արագության պետք է կազմի՝

1) 60 կմ/ժ թույլատրվող արագությամբ փողոցների համար մեկ ուղղությամբ երկու վահանակների միջև հեռավորությունը՝

ա. 18քմ – 150մ
բ. 15քմ – 100մ
գ. 6քմ – 50մ
դ. 2քմ – 25մ

2) 60 կմ/ժամ թույլատրվող արագությունից պակաս փողոցների համար մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև հեռավորությունը՝

ա. 18քմ – 80-100մ
բ. 6քմ – 45-50մ
գ. 2քմ – 20-30մ

10. Գովազդային վահանակների ներքևի եզրը պետք է տեղադրված լինի փողոցի մակերեսից 6մ-ից ոչ պակաս բարձրության վրա:
11. Հենասյան հիմքերը հողի ծածկույթում պետք է տեղադրվեն քաղաքաշինական նորմերին և շինարարական տեխնոլոգիաներին համապատասխան՝ մեկ ամսվա ընթացքում վերականգնելով սիզամարգի ծածկույթը:
12. Չափորոշիչներում չնշված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշմամբ հաստատված ցանկում չընդգրկված 2.0 քառակուսի մետրից ավելի մակերեսով ֆիրմային նշանների և գովազդվող տարբեր ապրանքանշանների տեղադրումը թույլատրվում է Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ղեկավարի որոշմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 105-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՍՏԱՎԱՅՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 22-ի թիվ 8-Ա որոշմամբ հաստատված ավագանու կանոնակարգի 9-րդ կետով և ավագանու անդամ Դավիթ Ախտոյանի զեկուցագիրն ավագանու նստավայրը ժամանակավոր փոփոխելու վերաբերյալ, նկատի ունենալով, որ ավագանու նստավայրում տեղակայված են Վաղարշապատի միասնական սոցիալական ծառայության, Վաղարշապատի անձնագրային բաժնի, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիական ծառայության աշխատակիցները. ***<u>Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝</u>***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու գործունեությունը ժամանակավոր կազմակերպել և նիստերն անցկացնել Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Նաիրի փողոց թիվ 42 հասցեում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 106-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի հաջորդ հերթական նիստի գումարման օր սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 15-ը, ժամը 10:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԽՏՈՅԱՆ ԴԱՎԻԹ

ԱՂԵԿՅԱՆ ՌՈՒԲԻԿ

ԱՎԱԳՅԱՆ ԼԻԼԻԹ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԻՑՅԱՆ ԷՄԻՆ

ԻՍՊԻՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՆԱՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**